

եւ ոմն 'ի նոցան գրեալ եղիր. եւ հաւանեալ՝ ասէ.

Ծայրըն ձային, ծակըն ծային՝
Կու նըմանի գիրն Ալիծին»:

Յաւելու աւանդողն՝ եթէ համբաւ այսպիսեաց հոչակիր «յարեւելս. եւ լուեալ վարդապետք զայսպիսիս՝ եկին տեսանել... զարմացան եւ ասեն, Իրաւի է զոր լուաքն, եայլ աւելի. եւ ետուն փառք Աստուծոյ»:

Զոր եւ մեր մատուցեալ յօժարութեամբ, յաւելցուք եւ շնորհս մերոյս Ա Լեւոնի. որոյ եթէ չէր եղեալ որպիսի եղեն, եւ չէր արարեալ զոր արարն, ոչ այսքան բարգաւաճէին եւ դպրութիւնք 'ի Սիսուան. որոյ արքունիք եւ արքայազունք, (ոչ զանգիտեմ ասել), գերագանցեցին յայնժամ գրասիրութեամբ զամենայն արքունեօք դրացեաց իւրեանց յարեւելս, թերեւս եւ զամենեքումք որ յարեւմուտս. եւ եթէ հանգոյն սոցայում վիճակեալ էր եւ մերոցս՝ ունել անքոյթ կայան, հեռի յասիական եւ 'ի լիբիական ասպատակաց, ցո՛ր վայր արդեօք բարձրանային բանական բարգաւաճանք պայազատաց Լեւոնի.– զայս թողեալ իմաստասիրել անյաչաղ իմաստասիրաց, շատասցուք մնացորդօք մատենից ուսումնասիրաց մերոց՝ պսակաւորացն եւ սքեմաւորաց Սիսուանեայց, որք արդ միակ պատուական (ակն ունիմք թէ եւ յաւերժական) մնացուածք են փառաց, զանձուց, յաղթանակաց, հանդիսից, աղերսից, եւ համօրէն վայելչութեանց նոցին, եւ մեզ երկդիմի առիթք՝ անօգուտ տխրանաց եւ օգտաւէտ սխրանաց:

Գ. Պաշարումն Կապան բերդի 'ի սուլտանէն Իկոնիոյ. վերջին
շահատակութիւն Լեւոնի, եւ գերեթափութիւն իշխանացն գերելոց

Ոչ պակասեցին Լեւոնի ոչ կակղութիւն եւ ոչ պնդութիւն սրտի եւ կամաց, ոչ եռանդն եւ աշխոյժք հոգւոյ, եւ ոչ նրբութիւն եւ տեսութիւն մտաց. մի ինչ էր միայն որ երթայր եւ նուազէր, ըստ օրինաց ժամանակի եւ պատահարաց բնութեան.– աւուրք կենացն եւ առուգութիւն մարմնոյն, որ ոչ եւս ժուժայր հաւասարել անդուլ ներգործութեանց ամենաշարժ հոգւոյն. եւ թերեւս՝ ինոյն ինքն՝ իբրազիմապատիկ կրթանացն՝ եհաս նմա ուխտ կրթուցիչ ձեռացն եւ ոտից, որ էր հաւանօրէն յօղացաւորութիւնն, նիկրիս, ըստ Տաճկաց, որպէս գրէ իսկ Սմբատ. «Ի ծերութեան Լեւոնի՝ որ յուստեալ? էր՝ ինկրիսէն, եւ աւերեալ էր ձեռքն եւ ոտքն». իսկ պատմիչն արքունի՝ Թագաւորացաւ կոչէ զախտն, ոչ գիտեմ՝ իպատիւ թագաւորին